ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2025 թվականի հոկտեմբերի 7-ի N 69-Լ

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ 62-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 34-րդ հոդվածի 1-ին մասերով ՝ Հաշվեքննիչ պալատը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Հաշվեքննիչ պալատի 2025 թվականի սեպտեմբերի 30-ի «Հաշվեքննիչ պալատում ծառայության պաշտոնների համալրման համար մրցույթի անցկացման կարգը և պայմանները սահմանելու մասին» թիվ 62-Լ որոշման հավելվածում (այսուհետ՝ Հավելված) կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները՝

1) Հավելվածի 11-րդ կետում «ստորաբաժանումների» բառից հետո լրացնել «համակարգողները,» բառը, իսկ «որի հիման վրա էլ հայտարարվում է մրցույթ» բառերը փոխարինել «որն անձնակազմի կառավարման ստորաբաժանման կողմից գրավոր ընթացակարգով ներկայացվում է Հաշվեքննիչ պալատի նախագահին» բառերով,

2) Հավելվածում լրացնել նոր 11.1-ին կետ հետևյալ բովանդակությամբ՝

Մրցույթ անցկացնելու մասին հայտարարության նախագծի կազմման համար ձևավորվում է հանձնաժողով, որի կազմը հաստատում է Հաշվեքննիչ պալատի նախագահը՝ յուրաքանչյուր դեպքում հաշվի առնելով մրցույթով համալրվող պաշտոնի առանձնահատկությունները: Հաշվեքննիչ պալատի նախագահն ի պաշտոնե նախագահում է հանձնաժողովը: Մրցույթ անցկացնելու մասին հայտարարության նախագիծը հաստատվում է Հաշվեքննիչ պալատի նախագահի կողմից:»,

3) Հավելվածում լրացնել նոր՝ 29.1-29.2-րդ կետեր հետևյալ բովանդակությամբ՝

«29.1. Գրավոր/թեստային հանձնարարությունների և հարցազրույցի փուլերի գնահատումն իրականացվում է՝ հիմք ընդունելով Հաշվեքննիչ պալատի 2025 թվականի հուլիսի 24-ի թիվ Լ որոշմամբ տվյալ պաշոնի համար սահմանված կոպետենցիաները և տվյալ պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթների իրականացման համար անհրաժեշտ հմտությունները:

Գրավոր/թեստային հանձնարարությունների և հարցազրույցի փուլերի շրջանակներում անհրաժեշտ կոմպետենցիաների գնահատման հարաբերակցությունը որոշվում է ըստ պաշտոնների ենթախմբերի, որի վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է մրցույթի հայտարարության տեքստում՝ համապատասխան գնահատման թերթիկի տեսքով:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ

14/10/2025

X

/Ա. ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

ԿԱՐԵՆ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ

Signed by: ARUSTAMYAN KAREN 3814790103